# ԲԱԶՄԱՎԷՊ

## Ի ԲԱՐԵՐԱՐՍ ԻՒՐ

Ո՛ զցուրտ քոյին ջեռուցեալ ծոց և զամուլ
Այս հընգերեակ յիմաստութեան զիս ի լոյս
Վերածնանել օժանդակէ քեզ, Մամուլ.
Ո՛ զանբարբառ թերթս յարդարէ Բազմավէպս ,
Յափանց Նրժդեհ թռուցեալ հընչել ըզխրախոյս
Ի յերախտանս յազգին սիրոյ անվրէպս .

Ո՛ զիմ արփիս խոնարհ ձըգնի համասփիւռ
Ճառագայթել ստուերանըստացն Արամայ
Զհայրենականն ազգեալ կենաց ըզզեփիւռ .
Ո՛ ի պալատս ինձ և յանշուք տաղաւար
Ասպընջական պատրաստէ հեշտ և կամայ
Փարել զինեւ սնանկաց ճոխից հաւասար :

Գիտէք երկինք. հասուցէք ձայն զայս դողդոջ,
Զայն որ ի հրոյ հոգւոյ փայլակն անդր ի վեր
Գոռայ զՏարւոյս բարերջանիկ գոլ բողբոջ,
Ի Սատարացն իմ հասուցէք սիրտ ի վսեմ.
Եւ երախտեաց ասացէք խուն զայս Նուէր
Յանձանց հեզոց յօժարընծայ ձեզ ձօնեմ:

Ոչ ոսկեգիծ ոչ կրձէից սեանց ի տառ
Զեռամբ սրտի զանուանս դրոշմեմ զիմ Սեհից,
Որոց արձան յերկնէ Գթութիւնըն պայծառ
Եւ պատուանդան կանգնի դիտակըն Մասեաց,
Օգնութիւն առատութեան բարւոյն կից
Նման թողուլ ի սիրտ ուր վէպս Հայկազնեայց:

